

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ**

Անիկա ջուրի ճամբաները տնկուած ծառի պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կուտայ: (Սաղմոս 1.3):

Աստուածավախ մարդիկ Աստուծոյ Խօսքին մէջ նմանցուած են գետերու եզերքը տնկուած առողջ ծառերու, որոնք առատ պտուղ կ'արտադրեն եւ շատ տերեւ ունին: Պտղատու ըլլալու համար հաւատացեալները պէտք է.

Ա) Ամբասիր նկարագիր ունենան: Մարդիկ կը սիրեն տեսնել անհատներ, որոնց նկարագիրը պարկեշտութիւն կ'արտայայտէ եւ որոնց կեանքը արատաւորուած չէ մեղքով:

Բ) Զօրաւոր ըլլան: Անոնք, որոնք քաջածանօթ են Աստուծոյ Խօսքին ճշմարտութիւններուն, զօրաւոր կ'ըլլան կեանքի դժուարութիւններուն եւ փորձութիւններուն մէջ:

Գ) Աճումի ընթացքին մէջ գտնուին: Ինչպէս առողջ ծառը կ'աճի եւ իւրաքանչիւր տարի շրջանակ մը կ'աւելցնէ իր բունին վրայ, նոյնպէս ալ հաւատացեալներ պէտք է աճին Տիրոջ շնորհքին մէջ (Բ. Պետ. 3.18):

Դ) Օրհնութեան միջոց ըլլան ուրիշներու: Կարգ մը ծառեր ուտելիք կը հայթայթեն, ուրիշներ շուք կու տան, ոմանք ալ որպէս փայտ գործածուելու կը ծառայեն: Հաւատացեալներ պէտք է հոգեւոր սնունդ, մխիթարութիւն եւ քաջալերութիւն հայթայթեն իրենց շրջանակին:

Ե) Պատրաստ ըլլան տեղափոխուելու երբ Աստուած կանչէ: Մենք սահմանուած չենք երկրի վրայ մնալու: Մենք կը սպասենք, որ հասնի ժամանակը երկինքի պարտէզին մէջ տնկուելու:

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ԽՆԿԱՄԱՆ**



Խնկարգութեանէն առաջ, սարկաւաքը բուրվառը ձեռքին, կը մօտեմայ աւագերեցին, ժամասացին կամ եկեղեցական արարողութեան հանդիսապետող հոգեւորականին եւ խուսկը օրհնել կու տայ: Խնկամանին մէջ փոփր դգալ մը կը գտնուի օրհնուած խուսկը բուրվառին մէջ դնելու համար:

Խնկամաններ կրնան կափարիչ ունենալ կամ ոչ:

Խմկամաններ յաճախ կրնան արւեստի գործ ըլլալ՝ զարդարուած ֆանդակներով եւ հայ եկեղեցւոյ կաթողիկէներով: Այս երեսոյթին կրնանք ականատես դառնալ, երբ այցելեմք մեր կաթողիկոսութեան գանձատուներ:



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ**



ՔՈՒ ԽՕՒԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸՍԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Սղ.119.105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻԻ 40

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Առ. 3.18-23: Ես. 65.22-25: Գղ. 6.14-18: Ստթ. 24.30-36

**ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻ ՏՕՆ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.30-36**

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած գօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն միւսը: Թճեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք՝ թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ, եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իսօքերս պիտի չանհետանան:

Մակայն ո՛չ ոք գիտէ, թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

**Ո՛չ ոք գիտէ, թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:**

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ, ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի ցամբով: Ամէնօրեայ աղօթքը կարեւոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամէնօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան սուրբ Հռիփսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս (243-31) կայսեր կողմէ կը հալածուին, կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարագայ լեռան լանջին: Սուրբ Հռիփսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը, որ ստացած էր ժառանգարար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ թագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հռիփսիմեանց կոյսերը հալածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հռիփսիմէն իր խաչը կը պահէ Վարագայ լեռան մէկ քարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտէին, թէ այդ խաչը պահուած է Վարագայ լեռան վրայ, բայց չէին գիտեր թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց ճգնութիւնը կ'ընեն Թողիկ ճգնաւորը եւ իր աշակերտ՝ Հովկըր, որն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծոյ, որ ձեւով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, միշտ կ'ուզէ զինք հաւատացողներուն խնդրանքները իրականացընել: Օր մը լոյսի տեսիլքով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անջատուի Սուրբ Նշանը՝ խաչը եւ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու ճգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը, որ կ'ըսէ «Քրիստոս հաճեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարագայ լեռան Գայիլիա կոչուող գագաթին վրայ, այնպէս մը որ ամէն մարդ կրնար տեսնել զանոնք:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռչտունեաց Վարդ Ռչտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան Վարագ սուրբ Խաչին երկրպագելու:

Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ, եւ ուր, որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ: Այս առիթով կը գրուի նաեւ «Նշանաւ ամենայաղթ խաչիւղ քով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարագայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շարաթապահք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիները»:

Վարագայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է Ներքին Վարագավանքը, ուր ալ կը պահուէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021: Երբ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորութիւնը կը յանձնէ Բիւզանդիոնի, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարագավանք: 11-րդ դարուն, Աշոտ Գ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինել կու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարագավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոշար, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անուանով: Մաղաքիա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»-ին մէջ կը վկայէ, որ իր օրով Սուրբ Խաչը տակաւին կը մնար վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն մեծ եղեռնէն ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարագայ Սուրբ Խաչի գորութեամբ կանգ առած է համաճարակը:

Ազգաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ խաչը երեւցած է նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկաւորութեան ժամանակ Վարդապատէն մինչեւ Օշական, ըստ Սովսէս Խորենացիի վկայութեան:

# Հ Ո Գ Ե Ի Ո Ր Ղ Ա Տ Գ Ա Ս

## ՈՉ ՀԱՆԳԻՍՏԸ ԵՒ ՈՉ ԱԼ ԱՆՀԱՆԳԻՍՏԸ ԹՈՂ ՔԵՉ ՏԱՐԱՎՅՆԵՆ ԿԱՐ ԹՈՒՂՅՆԵՆ

Խաչեալին զինուորը հաւատարիմ մարդն է: Հաւատարիմ իր Չօրավարին կամքին, խօսքին ու խոստումին: Մեր հաւատարմութիւնը հանդէս կու գայ, երբ հանգիստ պայմաններու կը հանդիպինք, ինչպէս նաեւ երբ լուրջ նեղութիւններ կը դիմագրաւենք: Լուրջ փորձութիւններն են, որ կը փաստեն եթէ երբեք մենք լուրջ հաւատացեալներ ենք, հաւատարիմ զինուորներ ենք: Զինուոր մը կրնայ ընկրկիլ եւ դասալիք ըլլալ երկու պարագաներու տակ. առաջին՝ երբ պատերազմը կը սաստկանայ եւ վտանգը անխուսափելի կը դառնայ, եւ երկրորդ՝ երբ հանգիստ պայմաններով կը շրջապատուի: 144 Մնայուն հանգիստը կրնայ զինք թուլցնել ու թմրեցնել, իսկ ծանր ու բուռն պատերազմը՝ կրնայ նահանջի մատնել զայն:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Միբելի զինուորը Քրիստոսի, թոյլ մի տար, որ հանգիստը քեզ թուլցնէ, կամ անհանգստութիւնը տկարացնէ:

**ԱՌԱՎԱՅ (Գ. 23, 19-25)**  
*Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն ն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոյ ներուն ու իրենց մարմինը մաշող ներուն, վասնպի գինեմոյն ու շուայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուտած հանդերձ ներ կը հագցնէ:*

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

## ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏԱԿ, ԹԷ ԻՆՉՊԵՍ ԱՍՈՒՐՎՅՈՒՆ ԿԸ ՆԱԿԱՎՈՒՆԱՍԿԵՆ ՈՐ ԿԸ ՀՈՎԱՅ ԲՈՒՐ ԱՐԱՐՎՅՆԵՐԸ, ԿԱՐԿ՝ ՍԱՂԱՌՈՍ 36

Ամբարիշտին սրտին խորը բոյն դրած մեղքը կը յայտարարէ, թէ իրեն համար Աստուծոյ վախը գոյութիւն չունի: Այդպիսի կեղծ խօսքերով ամբարիշտը ինքզինք կ'օրօրէ, փոխանակ իր անօրէնութիւնը խոստովանելու եւ գայն առելու: Անօրէն եւ ինքզինք խաբող խօսքեր, որոնցմով ան կը լքէ իմաստութիւնը եւ բարի գործերը: Պակած տեղը անօրէնութիւն կը խորհի, բարի ֆամբուն չի հետեւիր, եւ չարէն չի հեռանար: Դո՛ւն է, որ կը հոգաս մարդոց, թէ՛ անասուններուն կարիքները, Տէ՛ր: Ի՛նչ թանկագին է հոգածութիւնը, ո՛վ Աստուած բոլոր մարդիկ ֆու թեւերուդ հովանիին կ'ապաւինին: Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհներու ֆու գետեղ խմել կու տաս դուն անոնց: Որովհետեւ դո՛ւն եւ կեանքի աղբիւրը, լոյսովդ է, որ մեմք լոյսը կը տեսնենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը ֆանջնան, եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են: Թոյլ մի՛ տար, որ ամբարտաւան մարդիկ ընկնեն զիս, չարագործները յաջողին զիս հալածէ: Հոն՝ պիտի իյնան բոլոր անոնք՝ որոնք անօրէնութիւն կը գործեն. պիտի տապալին եւ ա՛լ բնաւ չկանգնին:

### ՍԱՂԱՌՈՍԱԳԻՐՔԷՆ